Robert Bosch Stiftung

„Ոչ թե պարիսպներով պատված Եվրոպան կարող է սահմաններից անդին հաշտվել, այլ՝ աշխարհամասը, որը վերջ կդնի իր բաժանարար սահմաններին“:
Ռիխարդ ֆոն Վայցզեկեր, 1985

Robert Bosch Stiftung GmbH
Heidehofstraße 31
D-70184 Stuttgart

10.01.2012

Արդյունավետ կառավարման Կառլ Ֆրիդրիխ Գյորդելեր քոլեջը հայտարարում է 2012թ. սեպտեմբերի 8-29-ը Բեռլինում եւ Վարշավայում կազմակերպվելիք քոլեջի մասնակցության մրցույթ

Ադրբեջանից, Բելառուսից, Թուրքիայից, Հայաստանից, Մոլդովայից, Ռուսաստանից,Վրաստանից եւ Ուկրաինայից քսան երիտասարդ ղեկավար ուժերի համար:

:: Դուք աշխատո՞ւմ եք հանրային կառավարման ոլորտում եւ ակտիվորեն մասնակցո՞ւմ եք միջազգային հարաբերությունների ձեւավորմանը:
:: Դուք ցանկանո՞ւմ եք կատարելագործվել եւ կապեր հաստատել ներգրավված եվրոպացիների հետ:
:: Դուք ցանկանո՞ւմ եք զարգացնել եւ իրագործել նոր մտահղացումներ եւ նորարարական կոնցեպտներ:

Արդյունավետ կառավարման Գյորդելեր քոլեջը հրավիրում է Ձեզ

- սեմինարների միջոցով կատարելագործվելու,
- ակտիվորեն մասնակցելու քննարկումների, նախագծերի աշխատանքային պարապմունքների,
- կապեր հաստատելու Գերմանիայում, Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի երկրներում եւ՝
- ներդրում կատարելու արդյունավետ կառավարման զարգացման եւ հանրային կառավարման բարեփոխումների գործում:

Քոլեջը կազմակերպվում է Արտաքին քաղաքականության գերմանական ընկերակցության (DGAP) հետ համագործակցության միջոցով:

Եվրահանձնաժողովի նախկին փոխնախագահ, պրոֆեսոր Գյունթեր Ֆերհոյգենը կուղեկցի քոլեջի մասնակիցներին որպես քոլեջի տնօրեն:

Քոլեջի գլխավոր թեմաները.

1. Պատասխանատու գործել. մասնակիցները կծանոթանան հանրային կառավարման ոլորտի բարեփոխումներին եւ արդյունավետ կառավարման կոնցեպտին. ինչպե՞ս են կազմակերպված հանրային կառավարման մարմինները Եվրամիությունում, հաղորդակցման ինչպիսի՞ ուղիներ եւ հարթակներ են գործածվում, ինչպե՞ս կարող են հանրային կառավարման մարմիններն էլեկտրոնային կառավարման միջոցով նորովի եւ արդյունավետ վերակառուցվել, ինչպիսի՞ն է քաղաքականության հետ համագործակցությունը:

Քոլեջի այս հատվածը կկազմակերպվի գերմանական համալսարաններից մեկի հետ համագործակցության միջոցով եւ ավարտին կտրվի առանձին հավաստագիր:

2. Հայացք կուլիսներից անդին. մասնակիցները կհանդիպեն հասարակության, քաղաքականության եւ հանրային կառավարման ոլորտի փորձագետների հետ, կխորացնեն իրենց տպավորությունները Գերմանիայի եւ Եվրամիության քաղաքական կյանքի եւ փոխհարաբերությունների մասին՝ այդպիսով հաստատելով կարեւոր կապերի ցանց: Քոլեջի նպատակը փոխադարձաբար սովորելն ու լավագույն փորձի փոխանակում կատարելն է:

Մասնակիցներին կաջակցի Արտաքին քաղաքականության գերմանական ընկերակցության շրջանակներից փորձառու մի խորհրդատու, ով կփոխանցի իր փորձառությունը եւ կարող է Գերմանիայում այլ օգտակար կապերի ցանց ստեղծելու հնարավորություն ընձեռել:

3. Տեւականորեն կերտել. քոլեջը հնարավորություն է տալիս մասնակիցներին իրենց աշխատանքային բնագավառներում զարգացնել եւ իրականացնել արդյունավետ կառավարման թեմային առնչվող սեփական նախագիծ, որն օգտակար կլինի հայրենի կազմակերպության համար:

Մրցույթի հայտ ներկայացնելիս անհրաժեշտ է ներկայացնել նման որեւէ նախագծի սկզբնական մշակում: Քոլեջի ընթացքում մասնակիցները կհստակեցնեն իրենց նախագծերը պրոյեկտմենեջմենթի աշխատանքային պարապմունքում: Այդ գործում նրանց կաջակցեն պրոյեկտ-մարզիչներ: Մասնակիցներին հնարավորություն կընձեռվի առանձին օրերի Բեռլինում եւ հարակից վայրերում հյուրընկալվելու իրենց աշխատանքային ոլորտին համապատասխան կազմակերպություններում: Ծրագրի ավարտից հետո

մասնակիցներն իրենց նախագծերն ինքնուրույն կիրականացնեն հայրենի երկրներում:

Քոլեջի ավարտից կես տարի անց, մասնակիցները կարող են տարածաշրջանային հանդիպում կազմակերպել եւ իրենց նախագծերի միջանկյալ ամփոփման շուրջ մտքերի փոխանակություն կատարել: Հաջորդ՝ 2013 թ. քոլեջի մեկնարկին մասնակիցները կրկին կհանդիպեն Բեռլինում եւ կներկայացնեն իրենց ծրագրերի արդյունքները:

Սեմինարի լեզուն գերմաներենն է:
Մասնակիցներին, անհրաժեշտության դեպքում, հնարավորություն կտրվի օգոստոսի 27-ից սեպտեմբերի 8-ը լեզվի իմացության թարմացման դասընթաց անցնել Գերմանիայում:

Մրցույթին մասնակցությունը

Խնդրվում է մասնակցության հայտերը ներկայացնել միայն առցանց հարթակում՝ https://bewerbung.boschstiftung-portal.de/onlinebewerbung/

Հայտերի ընդունման վերջնաժամկետը՝ 12.03. 2012թ.

Դուք կարող եք մասնակցության հայտ ներկայացնել, եթե

- Ադրբեջանի, Բելառուսի, Թուրքիայի, Հայաստանի, Մոլդովայի, Ռուսաստանի,Վրաստանի կամ Ուկրաինայի քաղաքացի եք,
- ապրում եւ աշխատում եք այդ տարածաշրջանում ,
- ունեք բարձրագույն կրթության աչքի ընկնող ավարտական արդյունքներ,
- ունեք հանրային ոլորտում աշխատանքի նախնական փորձ (հանրային կառավարման մարմիններ, հանրային ձեռնարկատիրություն, հանրօգուտ կազմակերպություններ եւ այլն) եւ Ձեր գործատուի աջակցությունը,
- ունեք կոնկրետ նախագծի մտահղացում եւ հետաքրքրված եք արդյունավետ կառավարմամբ եւ քաղաքական մտածողությամբ,
- ունեք հասարակական պատասխանատվության գիտակցում եւ ներգրավվածություն, առաջնորդական հատկանիշներ եւ՝
- գերմաներենի գերազանց իմացություն, անգլերենի իմացություն:

Ծախսերի ստանձնումը

Ռոբերտ Բոշ հիմնադրամը հոգում է քոլեջի մասնակցության հետ կապված հետեւյալ ծախսերը.

Մասնակիցների ընտրության հարցազրույցների ժամանակ.

- ընտրության հարցազրույցին մասնակցելու համար հայրենի բնակավայրից Բեռլին եւ հետադարձ ճանապարհածախսը,
- կացարանի եւ սննդի ծախսերը,
- այցագրի ծախսերը,
- բժշկական ապահովագրությունը:

Լեզվի դասընթացի ժամանակ.

- հայրենի բնակավայրից դասընթացի անցկացման վայր, այնտեղից՝ Բեռլին եւ Բեռլինից հայրենի բնակավայր ճանապարհածախսը,
- դասընթացի ծախսերը (օրական 4 ժամ, դասընթացներին մասնակցության որոշումը կայացնում է Ռոբերտ Բոշ հիմնադրամը),
- կացարանի ծախսը, սննդի ծախսերը՝ կիսով չափ (առանց ընթրիքի),
- սննդի, հանրային ներքաղաքային տրանսպորտի եւ Գյոթե ինստիտուտի կողմից լրացուցիչ վճարման ենթակա առաջարկների համար ծախսերի հատուցում 300 եվրոյի չափով,
- այցագրի ծախսերը,
- բժշկական ապահովագրությունը:

Քոլեջի ընթացքում.

- հայրենի բնակավայրից Բեռլին եւ հետադարձ ճանապարհածախսը (բացառությամբ՝ լեզվի դասընթացի մասնակցությունը),
- կացարանի ծախսը, սննդի ծախսերը՝ կիսով չափ (առանց ընթրիքի) եւ կեցության ծախսերի հավելավճար 400 եվրոյի չափով,
- այցելությունը Վարշավա,
- այցագրի ծախսերը,
- բժշկական ապահովագրությունը,
- հանրային ներքաղաքային տրանսպորտը Բեռլինում եւ Վարշավայում,
- սեմինարները:

Տեղեկություններ ծրագրի եւ կազմակերպիչների մասին

Կառլ Ֆրիդրիխ Գյորդելերը (Carl Friedrich Goerdeler)
Քոլեջն անվանակոչված է հանրային կառավարման ոլորտի իրավաբան եւ դիմադրության շարժման մարտիկ Կառլ Ֆրիդրիխ Գյորդելերի (1884-1945) անունով: Գյորդելերը 1930-1936թթ. եղել է Լայպցիգի ավագ քաղաքագլուխը, մեկն այն քիչ թվով ավագ քաղաքագլուխներից, ովքեր չէին անդամակցում Գերմանիայի ազգային սոցիալիստական աշխատավորական կուսակցությանը: Ի նշան Լայպցիգում ազգային սոցիալիստների վարած քաղաքականության դեմ բողոքի՝ նա հրաժարվել է քաղաքագլխի պաշտոնից եւ „Բոշ“ ընկերությունում աշխատանքի անցնելով՝ գործունեություն ծավալել ազգային սոցիալիստների ռեժիմի դեմ դիմադրության պայքարում: Որպես քաղաքացիական դիմադրության համահիմնադիր, Գյորդելերն իր հուշագրերում ուրվագծել է սահմանադրական-քաղաքական նոր կարգեր, ինչպես նաեւ՝ ծրագրեր եվրոպական պետությունների դաշնություն ստեղծելու վերաբերյալ: 1944թ. հուլիսի 20-ին կազմակերպված մահափորձի ձախողումից հետո Գյորդելերը 1945թ. փետրվարի 2-ին Բեռլինում ենթարկվել է մահապատժի:

Ռոբերտ Բոշ հիմնադրամը
մեկն է Գերմանիայում ձեռնարկատիրության հետ փոխկապակցված մեծ հիմնադրամներից: Այն հիմնվել է 1964թ. եւ շարունակում է ընկերության հիմնադիր, հանրային բարերար Ռոբերտ Բոշի (1861-1942) հանրօգուտ ջանքերը: Հիմնադրամն առաջնահերթ զբաղվում է ժողովուրդների միջեւ փոխըմբռնման, կրթության եւ առողջապահության թեմաներով:

Արտաքին քաղաքականության գերմանական ընկերակցության՝ Ռոբերտ Բոշ հիմնադրամի Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի կենտրոնը
կազմակերպում է խորհրդաժողովներ, ինչպես նաեւ փորձագիտական եւ թեմային քաջատեղյակ շրջանակների ներկայացուցիչների մասնակցությամբ զրույցներ Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի արդի քաղաքական զարգացումների շուրջ: Կենտրոնն օժանդակում է Ռոբերտ Բոշ հիմնադրամի՝ Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի ու Գերմանիայի ապագա որոշումներ կայացնողների եւ երիտասարդ գիտնականների աջակցությանն ուղղված բազմաթիվ ծրագրերի:

Ծրագրի ընթացքի եւ մրցութային հայտերի մասին մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ www.goerdeler-kolleg.de կայքում:

Հետադարձ կապ

Ծրագրի ղեկավարումը՝
Մարկուս Լուքս (Markus Lux)
Ռոբերտ Բոշ հիմնադրամ (Robert Bosch Stiftung)
www.bosch-stiftung.de

Մրցույթի մասնակիցների հետ կապը՝
Մարի-Լենա Մայ (Marie-Lena May)
Հեռ. +49 (0)30/25 42 31-13
Ֆաքս. +49 (0)30/25 42 31-16
m.may@dgap.org
www.dgap.org
Արտաքին քաղաքականության գերմանական ընկերակցություն
(Deutsche Gesellschaft für Auswärtige Politik e. V., DGAP)
Ռոբերտ Բոշ հիմնադրամի Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի
Կենտրոն (Zentrum für Mittel- und Osteuropa der Robert Bosch Stiftung)
Rauchstr. 17/18
D-10787 Berlin

Ցուցում. պարտադիր են համարվում պաշտոնական կայքում զետեղված գերմաներեն տեղեկությունները: